ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 01/08/2542-14
2014-10-01

ՀՀ ՏԿՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

Ի պատասխան Ձեր 01.10.2014թ. թիվ 01/08/2542-14 գրության՝ տրամադրվում են ««Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

Կատարող՝ Էմին Ավետիսյան
Գործարար միջավայրի բարելավման ու փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարչություն
597-134

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են փախստականի ճանաչման և ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

««Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագծով նախատեսվում է ապահովել ապաստանի և փախստականների վերաբերյալ ՀՀ օրենսդրության ներդաշնակեցումը ԵՄ չափորոշիչներին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները սահմանում է լիազոր մարմինը: Կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած անձինք կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով:

2. Նախագիծը չի համապատասխանում հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: Այսպես՝ նախագծի 35-րդ հոդվածում անհրաժեշտ է «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Նախագծում առկա են խմբագրման և հստակեցման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

1/ նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում միաժամանակ օգտագործվում են «ընտանիքից անջատված երեխա» և «ընտանիքից անջատված անչափահաս» հասկացությունները: Անհրաժեշտ է խմբագրել նախագծի 4-րդ հոդվածը

և ապահովել միատեսակ հասկացության կիրառում՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները:

2/ Նախագծի 13-րդ հոդվածով «օտարերկրյա» բառը նախատեսվում է փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով, սակայն «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում «օտարերկրյա» բառն օգտագործվում է երկու անգամ, ուստի նախագծի հիշյալ հոդվածն ունի հստակեցման կարիք, քանի որ նշված ձևակերպումից պարզ չէ, թե որ «օտարերկյա» բառին է խոսքը վերաբերում:

3/ Նախագծի 14-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ինտեգրման ծրագրերի մասին է խոսքը:

5. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

6. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1/ նախագծի ամբողջ տեքստում հոդվածների մասերի և կետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

2/ Նախագծի ամբողջ տեքստում «շարադրել հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3/ Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերում «կետում» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասում» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի դրույթները:

4/ Նախագծի 5-րդ հոդվածում «1.1» թիվն անհրաժեշտ է փոխարինել «9.1» թվով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:

5/ Նախագծի 8-րդ հոդվածում նշված «3-րդ մասում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ մասում» բառերով, քանի որ օրենքի 12-րդ հոդվածը բաղկացած է երկու մասից:

6/ Նախագծի 15-րդ հոդվածում անհրաժեշտ է օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ:

7/ Նախագծի 16-րդ հոդվածում անհրաժեշտ է «իսկ» բառից առաջ լրացնել «բառերը» բառը, իսկ «հարցով» բառից հետո՝ «բառերով» բառը:

8/ Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների:

9/ Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է «հանել 2-րդ կետը» բառերը փոխարինել «ուժը կորցրած ճանաչել 2-րդ կետը» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների:

7. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 1-ին, 2-րդ,4-րդ և 6-րդ կետերին:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

_____N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եգանյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի սեպտեմբերի 10-ի 01/08/2286-14 գրության՝ կից ներկայացվում է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Կարինե Թորոսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 380-227

Եզրակացություն

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

կատ. Ս. Մարտիրոսյան

մոնիթորինգի և վերլուծության վարչություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« »_____ 2014 թ. N_____

Ձեր 27.09.2014թ. N 01/08/2497-14

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ. ԵԳԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եգանյան

Ձեզ եմ տրամադրում «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կատարող՝ վերլուծության և մոնիթորինգի վարչություն, հեռ՝ 56 30 75
0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30
http://www.mlsa.am info@mlsa.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

_____ № _____

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման նախարարության
միգրացիոն պետական ծառայության պետ
պարոն Գագիկ Եգանյանին

Հարգելի պարոն Եգանյան

Ի պատասխան Ձեր ս.թ. սեպտեմբերի 27-ի N 01/08/2495-14 գրության, կից ներկայացնում ենք «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝ **Պավել Սաֆարյան**

Կատարող՝ Պ. Ղազարյան,
հեռ. 060 700 213

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է կատարելագործել ապաստանի և փախստականների բնագավառի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը և համապատասխան ընթացակարգերը՝ համապատասխանեցնելով դրանք եվրոպական չափանիշներին: Մասնավորապես՝ օրենքի նախագծի 10-րդ հոդվածով վերաշարադրվող «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նախատեսում է կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին տրամադրել դրամական օգնություն՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, ինչը հանգեցնում է ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման՝ նախնական հաշվարկով տարեկան 5,400.0 հազ. դրամի չափով (ըստ նախագծին կից տեղեկանքում բերված հաշվարկի, ենթադրվում է, որ մեկ տարվա ընթացքում դրամական օգնություն կարիք ունեցող անձանց թիվը կկազմի 30 մարդ և նրանցից յուրաքանչյուրին 3 ամսվա կտրվածքով կտրվի ամսական 60,0 հազ. դրամ՝ 60.000 x 30 x 3 = 5.400.000:):

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների, ինչպես նաև համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

)010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
)010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
:լ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 10) 52 10 99
(374 10) 54 08 57

№

<< >> _____ 2014թ.

ՀՀ տարածքային
կառավարման նախարարության
միգրացիոն պետական ծառայության պետ
պարոն Գ. Եգանյանին

Հարգելի պարոն Եգանյան

Ի պատասխան Ձեր 27.09.2014թ. N 01/08/2499-14 գրության, ներկայացնում եմ «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝ Ա. Գրիգորյան

Ա. Հարությունյան
567535

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: